Դատավորների կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման մասով հաշվետվություն (2020թ.)

1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով.

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից 2020 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 5 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդություններից 2-ը մերժվել են, 1-ով դատավորին հայտարարվել է նախազգուշացում, 1-ով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը կարճվել է:

2. Արդարադատության նախարար.

Արդարադատության նախարարի կողմից 2020 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 13 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդություններից 2-ը մերժվել են, 2-ով դատավորին հայտարարվել է նախազգուշացում, 3-ով՝ նկատողություն, 2-ով՝ խիստ նկատողություն, 2-ով դատավորի լիազորությունները դադարեցվել են՝ էական կարգապահական խախտման հիմքով:

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2020 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ չի ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ միջնորդություն:

4.Միջնորդություն կազմող հանձնախումբ.

Միջնորդություն կազմող հանձնախմբի կողմից 2020 թվականին Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 1 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը կարճվել է: